ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

ՐԱՖՖՈՒ ՆԱՄԱԿԸ ՔՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՄԱՍԻՆ

1913 թւից սկսած Էջմիածնի «Արարատ» պաշտօնաթերթում մենք հրատարակել ենք Ս. Նազարեանի, Մ. Նալբանդեանի, Գամառ-Բաթիպայի, Ս. Շահազիզի, Քեր. Պատկանեանի եւ Րաֆֆու նամակները – թւով հարիւրի չափ – ուղղուած Մոսկուա, Վերին-Ագուլեցի հանգուցեալ Մելիքոն Գասպարեան Փանեանցին:

Րաֆֆու նամակներից մէկը («Արարատ» 1913 թ. № 6–7, նամակ № 31) մի շատ թանկագին նշխարք ու վկայութիւն է Հ.Յ.Դ. Մեծ հիմնադրի՝ Քր. Միքայէլեանի մասին: Աւելորդ չենք համարում կրկին տպագրութեան յանձնել «Վէմ»-ի էջերում:

Նոր – Ջուղա.

Յ. ԻՐԱԶԵԿ

Թիֆլիս, 25 Դեկտ. 1885 ամի.

Յարգելի Բարեկամ

Մելքոմ Գասպարիչ,

Մի փոքրիկ յանձնարարութիւն ուզեց ինձ դրել այս նամակը: Մի քանի օր առաջ ճանապարհ ընկաւ դէպի Մոսկվա Ձեր հայրենակիցներից մի երիտասարդ Քրիստափոր Միքայէլեանց անունով, որ դիտաւորութիւն ունի այնտեղ բարձր ուսում առանալ:

Այդ երիտասարդը բոլորովին աղքատ տղայ է. նա ինքը կը պատմէ Ձեզ, թէ ինչպէս կամ ինչ միջոցներով կարողացել է ուսում առնել:

Մոսկվայում ապրելու համար նա ունի միայն ամսական 15 ռուբլի. ի հարկէ, դա շատ փոքր գումար է նրա ապրուստի համար:

Ես եւ ինձ հետ պ. Միքայէլեանցի մի քանի բարեկամները աշխատելու ենք, որ Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութիւնը ամսական մի 10 կամ 15 ռուբլի նշանակէ նրա համար: Բայց մինչեւ որ այդ կիրագործվէր, եւ որպէսզի նա ծախքերի կարօտութիւն չկրէր, ես կը խնդրէի Ձեզանից, որ ծանօթացնէիք նրան զանազան հայ ընտանիքների հետ, եթէ երեխաների համար մասնաւոր դասատու կը պահանջեն, նա կարող է շատ խղճմտանքով պարապվել: Պ. Միքայէլեանցը լաւ վարժապետ է, իսկ նրա բարոյականութեան մասին կարող էք հաւատացած լինել, որ ամենապատուական երիտասարդ է:

ԳԳ

Ընդունեցէք իմ անկեղծ յարգանքը

Յ. Մելիք – Յակոբեանց.

A.R.A.R.@

ԱՐԱՄԻ ՆԱՄԱԿԸ ՎԱՆԻՑ·

Բառացի ընդօրինակումն է այն նամակի, որ Արամ գրել է Հ· Յ· Դ· Բիւրօին Կովկաս 1915 թ· ապր· 15-16ին: Նամակը գրուած է քիմիական մատիտով, սպիտակ կտաւի վրա եւ գաղտնի ճանապարհներով ուղարկուած Կովկաս: Վանի պաշարման օրերից մնացած թանգագին վաւերագրի պատճէնն է այս· թնագիրը, երեւի, կորել է:
ԽՄԲ·

Կառավարութիւնը դաւադրաբար կոտորածի ձեռնարկեց· Իշխանը դաւով սպանուած, Վռամեան աքսորուած: Բաղմաթիւ դիւղեր հրկիզուած, 5–6000 կոտորած կանանց, երեխաների, դաւառների մէջ: Խիստ ընդհարում Վան եւ Շատախ: 10 օրէ ի վեր թնդան· կորոտան քաղաքի վրայ· ոչ մի վնաս մեզմէ: Շատախ 15 օր է կուի մէջ է: Ժողովրդի տրամադրութիւնը բարձր է: Ժողովրդի վերջին յոյսը ձեզ վրայ է: Օր մը ուշանալը անդամ դաւաճանութիւն: Շտապեցէ՛ք, ժողովրդի փրկութեան համար շուտ հասնել:

ՍՏ· ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ս· ԶԱՒԱՐԵԱՆԻՆ·

Հ· Յ· Դ· Կենտր· Դիւանում մնացած մի բաց նամակ է, անթըւակիր: Վրան Ս· Զաւարեանի ձեռքով մակագրուած է՝«Ստ·4XII 1912»: ԽՄԲ·

Յարգելի Սիմոն,

Խնդրում եմ մի երկտողով պատասխանէք իմ հետեւեալ հարցին, որով վաղուց է ինչ որ ուզում եմ Ձեզ դիմել, բայց միշտ յետաձգում էի մինչեւ հիմա: Երկու տարի առաջ Ռիգա գնալուս որ ես Ձեզանից 50 բուբլի վերցրի – այդ ի՞նչ փող էր եւ ի՞նչ պայմանով տուիք Դուք ինձ: Ամեն անդամ յիշելուս ինձ տանջում է այն անսրոշութիւնը, որ կապուած է այդ հարցի հետ: Գո՞ւցէ հարկաւոր էր շտապով վերադարձնել: Ես հնարաւորութիւն չեմ ունեցել մինչեւ այժմ վերադարձնելու պարտքս եւ այս բոպէիս էլ չեմ կարող վերադարձնել, բայց կ՚ուզենայի գոնէ, որ որոշէր ինձ համար այդ հարցը: Խնդրում եմ անպատճառ պատասխանէք: Յովսէփը գրել է Ձեզ, որ ես Բերլին եմ, – կարծում եմ նամակս չի զարմացնի Ձեզ: Ընդունեցէք ջերմ բարեւներս· Ձեզ յարգող Ս· Շահումեան:

Նամակի կողքին գրած է·

Իմ հասցէն· Berlin - Charlottenburg, Kaiser - Friedrichstr., 37., Gartenhaus II|r. *Գրեցէք խնդրեմ նոյնպէս, Արամայիս Երզընկեանը այդտե՞ղ է, թէ գնացել է:*

digitised by